

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՅԱՆԿ 2005 ՏԱՐԻՈՅ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՏԱՃԱՐԻՆ ԵՒ Ս. ՏԵՂԵԱՅ

1- Աթաճանեան ընտանիք Ս. Յարութեան տաճարին, Ս. Աստուածածնայ տաճարին եւ Բեթղեհէմի Ծննդեան տաճարին կը նուիրեն երեք լման ձեռք պատարագի զգեստ: (Յունուար)

2- Կ. Պոլսէն՝ Տէր եւ Տիկին Պօղոս եւ Սոնիա Երլան կը նուիրեն զոյգ մը մեծ եւ հատ մը փոքր արծաթեայ բուրվառներ, ինչպէս նաեւ հարիր հատ արծաթեայ բոժոժներ: (Մայիս)

3- Կ. Պոլսէն՝ Տիար Մկրտիչ Սէրթ-Շիմէք Ս. Յակոբի կը նուիրէ քսան հատ փիղոնի-չուրջառի ճարմանդ (Ս. էջմիածնի պատկերով), տասը ոսկեզօծ, տասը արծաթագոյն: (Յունիս)

4- Կ. Պոլսէն, Տիար Կարօ Հալէպեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ ա) արծաթեայ երկու փոքր եւ երկու միջակ վարդաջուրի սրսկման ամաններ, բ) արծաթեայ զեղեցիկ փոքր բաժակաման մը, գ) Լուացումի համար արծաթեայ չոնիչ եւ կոնք, հետեւեալ արձանագրութեամբ. (Եղաւ չոնիչս ի դուռն Ս. Յակոբայ արդեամբք եւ ծախիւք Կարօ Հալէպեանի, 2005): (Յունիս)

5- Դարձեալ Կ. Պոլսէն, Տիար Նուպար Դարչին եւ ընտանիք Ս. Յակոբի կը նուիրեն զոյգ մը մեծ արծաթապատ ճաճանչներ, կեղրոնը ոսկեզօծ Ս. Յարութեան պատկերով: (Յունիս)

6- Աթէնքաբնակ Տիկ. Գոհար Թաղէոսեան Ս. Յակոբեանց տաճարի ձախակողմեան առաջին սեան՝ Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը ի յիշատակ իր հանգուցեալ դստեր՝ Մարինա Ճամուղեանի: Երկրորդ մատանի մը, աջակողմեան առաջին սեան Աստուածածնայ պատկերին, ի յիշատակ իր հանգուցեալ եղբօր՝ Փանոս Ստրեանի: Ինչպէս նաեւ ան կը նուիրէ հետեւեալները. ա) Սկիհի մէկ ձեռագործ ծածկոց, կարմիր թաւիչի վրայ: բ) Մէկ գորփուրայ, կարմիր թաւիչի վրայ: Զոյգ մը կարմիր թաւիչի վրայ, ուլունքներով հիւսուած պատարագի հողաթափի երես: գ) Զոյգ մը սեւ թաւիչի վրայ, ուլունքներով հիւսուած հողաթափի երես: դ) Երեսուն հատ կերպասի վրայ հիւսուած փոքր խաչեր: ե) Բուրվառի համար 24 ոսկեզօծ բոժոժներ: Վ) Մէկ քիւօ խոնկ: Է) Կարմիր թաւիչի վրայ գործուած երկու «Ալֆա-Օմեղա» մոմի զարդեր եւ ը) Զոյգ մը ոսկեզօծ մեծ խնկամաններ: Նաեւ Տիկին Գոհար Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կը նուիրէ յիշեալ Սուրբին մէկիւղանկարը: (Օգոստոս)

7- Մոսկուայէն՝ մի ոմն Սրբոց Յակոբեանց տաճարին կը նուիրէ անագապղինձէ (պրոնզ) վաթսուս կանթեղներ: (Օգոստոս)

8- Հայրենաբնակ Տիար էմիլ Գրիգորեան, Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ մէկ ու կէս քիւօ արծաթ, չորս աւետարաններու կազմի համար: (Օգոստոս)

9- Տիկին Կրեթա Սողոմոնեան, իր թոռնուհիին՝ Մարիամի ծննդեան տարեդարձին առիթով Սրբոց Յակոբեանց տաճարին կը նուիրէ մէկ անագապղինձէ կանթեղ: (Օգոստոս)

10- Դարձեալ Հայրենարնակ՝ Աթաճանեան ընտանիք, Հոգչ. Տ. Էմմանուէլ Վրդ-ի ձեռամբ, Սրբոց Յակոբեանց տաճարին կը նուիրեն մէկ ձեռք պատարագի զգեստ (Շուրջառ, փորուրար եւ զոյգ մը բազպան):

11- Կ. Պոլսոյ՝ Պէյօղլու շրջանի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Թաղային Խոր-Հուրդը, Ս. Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կը նուիրէ երկու (2) զոյգ արծաթեայ քշոցներ, կեդրոնը՝ ոսկեզօծ Գառն Աստուծոյ պատկերով: (Հոկտեմբեր)

12- Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Հոգեւոր Հ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան, Սուրբ Հրեշտակապետաց վանքին կը նուիրէ կանաչաւուն թաւիչով սկիհի ծածկոց մը: (Հոկտեմբեր)

13- Սաղիմարնակ Տէր եւ Տիկին Նազարէթ Տէր Վարդանեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ աւագ խորանին կը նուիրեն գորգ մը, գորգ մը եւս Ս. Հովսիսիմէի մատրան Համար: 50 Հատ մեծ մոմ (Իւրաքանչիւրը 4 ժամ վառող), ինչպէս նաեւ Ռամէլէի՝ Ս. Գէորգ վանուց աւագ խորանին Համար մեծ Հովահար մը: (Հոկտեմբեր)

14- Տէր եւ Տիկ. Փոլ Մերկերեան, Տէր եւ Տիկ. Փիթըր Մերկերեան եւ Տիկին Մէր-իըն Քլարք (Մերկերեան), Ս. Յակոբի կը նուիրեն ձեռք մը ասեղնագործուած եպիսկոպոսական զգեստ, առանց շուրջառի: (Հոկտեմբեր)

15- Տիկին Արփինէ Մարտիրոսեան եւ զաւակները, Ս. Յակոբի կը նուիրեն ասեղ-նագործ, թանկարժէք լման ձեռք մը եպիսկոպոսական զգեստ:

16- Ամերիկայէն՝ Արժանապատիւ Տ. Գառնիկ Աւագ Քահանայ Հալլաճեան, 300 եարտ վեղարի կտոր կը նուիրէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, ի յիշատակ իր Հանգուցեալ դասընկերներէն՝ Գերշ. Տ. Զաւէն Արք. Զինչիւնեան, Հոգչ. Տ. Վարուժան Մ. Վրդ. Գապառաճեանի եւ Հոգչ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զղջանեանի: (Հոկտեմբեր)

17- Մոսկուայէն՝ Տիար Ռուբէն Գրիգորեան, 200 մեթր շուրջառի կերպաս կը նուիրէ, Սրբոց Յակոբեանց տաճարին: (Հոկտեմբեր)

Նուրհան Արք. Մանուկեան
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԷՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ